

Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության
միջև 1337 թ. կնքված պայմանագրի շուրջ
Արամ Չովհաննիսյան

Կիլիկիայի հայկական թագավորության պատմության առավել կարևոր դրվագներից մեկն արտաքին քաղաքականության և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունն է: Մասնավորապես այն չափազանց կարևորվում է 14-րդ դարի երկրորդ քառորդից, երբ հայկական թագավորության վիճակը գնալով էլ ավելի բարդանում էր:

Այսպես, Կիլիկյան Չայաստանի 14-րդ դարի երկրորդ քառորդի պատմության ամենակարևոր խնդիրներից մեկը Կիլիկյան Չայաստան-Եգիպտոսի սուլթանություն հարաբերությունների ուսումնասիրությունն է: ԵՎ այդ հարաբերություններում չափազանց մեծ կարևորություն է ներկայացնում 1337 թ. պայմանագիրը, որը մինչև այժմ խորությամբ ուսումնասիրված չէ, և մի շարք հարցերին տրված չեն սպառնիչ պատասխաններ: Չայտնի է, որ 14-րդ դարի առաջին քառորդից հետո Կիլիկյան Չայաստանի արտաքին քաղաքական իրավիճակը խիստ սրվել էր: Նախ՝ մի կողմից դադարել էր գործելուց հայ-մոնղոլական դաշինքը, իսկ մյուս կողմից էլ օր օրի վրա գնալով բավականին հզորանում էին Եգիպտոսի սուլթանությունը և թուրքմեն-կարամանները, որոնք արդեն մի քանի անգամ անհանգստացրել էին հայկական թագավորությանը: Չարկ ենք համարում նաև նշել, որ նշյալ ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքում, բացի Կիլիկիայի հայկական թագավորությունից, մնացել էր միայն մեկ քրիստոնյա պետություն՝ Կիպրոսի թագավորությունը, որը սակայն եական դեր չէր կարող խաղալ հայերին օգնելու գործում: Փոխարենը՝ Եգիպտոսի սուլթանությունից բացի՝ հայկական թագավորությանը արդեն սպառնում էին մի շարք այլ մահմեդական պետություններ ևս: Բացի այդ՝ 14-րդ դարի երկրորդ քառորդից ի վնաս Կիլիկիայի հայկական թագավորության կտրուկ կերպով բարդացավ Արևմտյան Եվրոպայի քաղաքական վիճակն, և երկրորդական պլան մղվեցին խաչակրաց նոր արշավանքների ծրագրերը: 1335-1336 թվականներին Եգիպտոսի սուլթանության հրահրումով Կիլիկիայի հայկական թագավորության դեմ արշավեցին Չալեպի սուլթան Ալթուն Բուղայի և թուրքմեն-կարամանների զորքերը¹: Այդ արշավանքների հետևանքում Կիլիկիայի հայկական թագավորությունը բավականին տուժեց և ընկավ ծանր վիճակի մեջ, իսկ դրսից որևէ օգնություն չստացվեց: Ստեղծված պայմաններում

¹ Սամվել Անեցի, Չալաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 168, Չայերեն ձեռագրերի հիշատակարաններ ժգ դարի, կազմեց. Լ. Խաչիկյանը, Երևան, 1951, էջ 295, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, կազմեց Վ. Չակոբյանը, հ. Ա, Երևան, 1951, էջ 88:

հայոց արքան ստիպված էր դիմելու Եգիպտոսի սուլթանին՝ հաշտություն կնքելու նպատակով: Սկզբնական շրջանում սուլթանը չհամաձայնվեց և նույնիսկ ձերբակալեց սուլթանի մոտ ուղևորվող հայկական դիվանագիտության պատվիրակության անդամներին, միայն որոշ ժամանակ անց կնքվեց հաշտության պայմանագիրը, որի մասին էլ ցանկանում ենք քննություն իրականացնել:

Նախ փորձենք պարզաբանել, թե հստակ որ թվականին է կնքվել Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև հաշտության պայմանագիրը:

Առաջին հերթին կցանկանայինք նշել, որ ի տարբերություն 1200-1325 թթ., 14-րդ դարի երկրորդ քառորդից մինչև թագավորության անկմանը սկզբնաղբյուրները շատ կցկտուր են, և այդ պատճառով բավականին բարդանում է մեր առջև դրված խնդիրը:

Այսպես, հայկական աղբյուրներից Սամվել Անեցին և 13-18-րդ դարերի մանր ժամանակագիրները² նշում են թշնամու զորքերի արշավանքների, հայկական տարածքների գրավման, մարդկանց գերեվարության մասին, սակայն որևէ տեղեկություն չեն հայտնում պայմանագրի կնքման թվականի վերաբերյալ³: Նման իրավիճակի ենք հանդիպում նաև Ժդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում⁴: Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված պայմանագիրը չափազանց բարդ կլիներ ուսումնասիրել, եթե բացառիկ կարևոր նշանակություն ունեցող տեղեկություններ չհաղորդեին արաբական, մասնավորապես Իբն-Իյասի արձանագրած նյութերը: Չեղինակը նշում է, որ 1337 թ. մայիսի 5-ին Այասը 3 օրով պաշարվեց, բայց շուտով հրաման եկավ վերադառնալ, քանի որ համաձայնություն էր կնքվել երկու կողմերի միջև⁵: Կարծում ենք, որ խոսքը հենց մեզ հետաքրքրող պայմանագրի կնքման մասին է: Այլապես դժվար թե այլ պարագայում թշնամու զորքերն նահանջեին: Եվ եթե պատմիչի տեղեկությունը ճշմարիտ է, ուրեմն արաբ հեղինակի մեջբերված հաղորդմամբ պայմանագիրը կնքվել է հենց 1337 թվականին: Այդ ճշմարտացիության մասին է վկայում նաև դեպքերի ժամանակակից ականատես Չեթուն Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունը⁶, որտեղ հեղինակն հստակ նշում է, որ հայ-մանլուքյան պայմանագիրը կնքվել է հենց 1337 թվականին: Եվ նա շատ

² Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Ա, էջ 88:

³ Սամվել Անեցի, էջ 168:

⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 295:

⁵ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Յ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 287, ժանոթագրություն 114:

⁶ Չեթուն Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1963, 4, էջ 193:

արժանահավատ աղբյուր է, քանի որ անձամբ մասնակցել է բանակցային գործընթացին: Դժբախտաբար միջնադարյան մյուս աղբյուրներում նշյալ խնդրի կապակցությամբ չենք հանդիպել այլ տեղեկության:

Այժմ տեսնենք, թե ինչ տեսակետներ են առկա ժամանակակից գիտական գրականության մեջ: Մի շարք գիտնականներ, որոնք խոսում են նշյալ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների մասին, ձեռնպահ են մնացել պայմանագրի կնքման թվականը նշելուց⁷, իսկ ահա հայտնի հայագետ Ղ. Ալիշանը իր հռչակավոր «Սիսուան» աշխատության մեջ նշում է, որ երկու պետությունների միջև պայմանագիրը կնքվել է կամ 1337 կամ էլ 1338 թվականին⁸: Ավաղ, հեղինակը ցույց չի տալիս այն աղբյուրը, որից օգտվել է: Բնականաբար 1337-ը և 1338-ը տարբեր թվականներ են և չեն հստակեցնում մեր խնդիրը: ԵՎ բացի այդ, 1338 թվականի տարբերակին դժվար է համաձայնվել, քանի որ չունենք որևէ աղբյուրի հաղորդում այդ մասին: Կարևոր ենք համարում նաև նշել, որ հետազոտողների մնացած մասը նշում են 1337 թ. տարբերակը: Այդ մասին են վկայում նաև հետազոտողներ Ա. Սուքիասյանը⁹, Գ. Միքայելյանը¹⁰, Լ. Տեր-Պետրոսյանը¹¹, Մ. Օրմանյանը¹² և Մ. Չամչյանը¹³, որոնք իրենց հետազոտությունների մեջ հստակ նշում են հենց 1337 թ. տարբերակը: Կարծում ենք, որ վերոնշյալ պայմանագրի 1337 թ. տարբերակն է ճշմարիտ, և մենք էլ միանում ենք այդ տեսակետին:

Այժմ տեսնենք, թե ինչ հաղորդումներ կան աղբյուրներում պայմանագրի բովանդակային դրույթների վերաբերյալ:

Այսպես, հատուկենտ աղբյուրներից մեկը, որ խոսում է նշյալ ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձերի և մասնավորապես 1337 թ. հայմանլուքյան պայմանագրի բովանդակային դրույթների մասին, ժդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններն են, որտեղ նշվում է, որ հայոց արքան թշնամուն գիջեց Ջահանի բերդերն ու երկրները, ինչպես նաև Այասը¹⁴, որը վիթխարի եկանուտներ էր ապահովում հայկական թագավորությանը. «Թագաւորն անճար կեցաւ ու կատարեաց զսուլտանին կամքն, ու երեստ զոր կտրէր Ջահան բերդերովն ու զերկիրն ու զպանծալին այս Այաս, զոր բազում ծախիւք շինեալ էր»: Գիշտ է, այս հաղորդումը շատ կարևոր է պայմանագրի լուսաբանման համար, սակայն հստակ

⁷ Կ. Սուքաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 465, Ս. Բոռնազյան, Յայ ժողովրդի պատմություն, ակադեմիական հրատարակություն, հ. 3, Երևան, 1976, էջ 775:

⁸ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 392:

⁹ Ա. Սուքիասյան, Կիլիկիայի պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 92:

¹⁰ Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 464:

¹¹ Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2008, էջ 407:

¹² Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջմիածին, 2001, սյուն 2166:

¹³ Մ. Չամչյան, Յայոց Պատմություն, հ. գ, Երևան, 1984, էջ 337:

¹⁴ Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ ժդ դարի, էջ 295:

պատկերացում չի տալիս, թե որոնք էին Ջահան գետի բերդերն ու երկրները, և կոնկրետ որ տարածքներն անցան թշնամուն: Բացի այդ՝ տարածքային կորուստներից բացի չկա այլ դրույթ: Հիշատակվող խնդրի շուրջ պարզաբանումներ է տալիս 13-18-րդ դարերի մանր ժամանակագիրներից մեկը՝ նշելով, որ Եգիպտոսին էին անցնելու Այասը, Կովայրան, Չամուսը¹⁵ և մինչև Ջահան ընկած տարածքները. « ՉՉՁ 1337 առ անօրէն ազգն իսմայելի Ջայաս և գԿովառայ և գՉամուսն և գմինչ Ջահան կտրէ. »¹⁶: Ինչպես նկատում ենք, ի տարբերություն ժդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների, մանր ժամանակագիրների հաղորդած վկայությունները ավելի որոշակի են դարձնում տարածքային զիջումների հարցը և կարող են օգտակար լինել մեր առջև դրված խնդրի լուծման համար: Ուսումնասիրվող խնդրի լուծմանը շահեկան կարող են լինել նաև արաբական աղբյուրներում եղած տեղեկությունները: Վերջիններս նախ նշում են, որ Եգիպտոսի սուլթանը, դաշնագրով կապված լինելով, չհարձակվեց Կիլիկյան Հայաստանի դեմ, բայց թույլ տվեց այդ անել Հալեպի Ալթուն Բուղա էմիրին¹⁷: Շարունակելով իր միտքը՝ պատմիչը նշում է, որ համաձայնագրով սուլթանին մնում էր Այասը, Ջայհանի արևելյան հողամասը՝ իր բերդերով ու քաղաքներով, որոնց մեջ՝ Մսիսը, Չամուղան, Կովեյրան, Չարունհան, Սարվանդիքարը, Փայասը, Նաջիման, Նողեյրը¹⁸: Փաստորեն Իբն Իյաս պատմիչի տեղեկությունները հստակորեն ցույց են տալիս այն տարածքները, որոնք Կիլիկիայի հայկական թագավորությունը զիջեց Եգիպտոսի սուլթանությանը: Եվ այդ տեղեկությունները կարող են ճշմարիտ լինել, քանի որ այդ բոլոր թվարկած տարածքները հանդիսանում էին Ջահան գետի արևելյան տարածքի հողեր: Պետք է նաև նշել, որ թվարկվող տարածքների մասին հետագա տասնամյակներին մենք այլևս չենք հանդիպում որևէ այլ տեղեկության, ինչն էլ ապացուցում է նշյալ աղբյուրի հաղորդման ճշմարտացիությունը: Ուսումնասիրվող խնդրի շուրջ չափազանց արժեքավոր վկայության ենք հանդիպում դեպքերի ժամանակակից Հեթուն Ախտոց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունների մեջ, որտեղ հեղինակը նախ հաստատում է, որ իրոք Ջայհան գետի տարածքի բերդերն անցել է թշնամուն, ապա ավելացնում, որ նշյալ պայմանագրով Կիլիկյան Հայաստանը Կարամանյան պետությանն էլ զիջել է Դեղնքարը¹⁹ և այլ բերդեր.« Ի թվին ՉՉՁ (1337) երես թագաւորն ի Հայոց երկրէն ի

¹⁵ Վերը նշված բերդերի մասին տեղեկությունները տես՝ Մ. Յովհաննիսյան, Կիլիկիան Հայաստանի բերդերն և բերդաքաղաքներն, Վենետիկ, 1989:

¹⁶ Մանր ժամանակագրություններ, հ. Ա., էջ 88:

¹⁷ Արբական աղբյուրները, էջ 287, ժանոթագրություն 114:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Դեղնքարը Լեռնային Կիլիկիայի բերդերից է, այդ մասին ավելի մանրամասն տես՝ Ղ. Ալիշան, նշվ. աշխ էջ 273, Յ. Մ. Յովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 94-95:

Մտրա սուլտանն ի Միլէք Նասրն՝ զՋահնայ այն դիհն իր բերդերովն ու երկրովն: Եւ տվին ի խարամանն զԴեղնքարն այլ բերդեր այլ խլեցին»²⁰: Այս եզակի տեղեկությունը միակն է հայկական և օտար աղբյուրների մեջ, որտեղ նշվում է, որ Կարամանյան պետությանը նույնպես զիջումներ է կատարվել, և հայկական բերդերից մի քանիսը անցել են կարամաններին: Ափսոս միայն, որ պատմիչի մոտ չեն պահպանվել նաև կարամաններին անցած մյուս տարածքների անվանումները՝ բացի Դեղնքարից: ԵՎ այդ տարածքների հանձնումը կարող է ճշմարիտ լինել, քանի որ Կարամանյան պետության գործերը մշտապես օգնում էին Եգիպտոսի սուլթանությանը Կիլիկյան Հայաստանի դեմ պայքարում: ԵՎ շատ բնական է, որ դաշնակցության դիմաց պետք է որոշակի փոխհատուցում ստանային: Ցավոք, մանրագին հետազոտելով միջնադարյան մյուս աղբյուրները՝ չենք կարողացել գտնել որևէ այլ տեղեկություն, թե էլ ինչ զիջումներ են կատարվել Կարամանյան պետությանը: Բացի այդ՝ միջնադարյան և ոչ մի աղբյուր մեզ չի տեղեկացնում, թե որքան ռազմատուգանք պետք է Կիլիկիայի հայկական թագավորությունը վճարեր Եգիպտոսի սուլթանությանը: Կարևոր ենք համարում նաև նշել, որ միջնադարյան գրեթե բոլոր աղբյուրներում առկա են որոշ բացթողումներ: Այսինքն՝ մշտապես խոսվում է ռազմաքաղաքական իրադարձությունների, տարածքային կորուստների մասին, որը բնականաբար ամենակարևորն է, սակայն բաց են թողնված պայմանագրի բովանդակության մյուս կարևոր դրույթները, որոնք ևս ցանկալի կլինեն, որպեսզի վերջիններս հաղորդեին: Խոսքը մասնավորապես վերաբերվում է առևտրատնտեսական հարաբերություններին, որից պետությունները մեծ եկամուտներ էին ստանում: Եվ շատ հաճախ շատ պատերազմների մի մասն մղվում էր հենց տնտեսական խնդիրների համար:

Այժմ տեսնենք, թե ինչ տեսակետներ են առկա նշյալ խնդրի շուրջ գիտական գրականության մեջ: Այսպես հետազոտողներ Ղ. Ալիշանը²¹, Կ. Մուքաֆյանը²² և Ա. Սուքիասյանը²³ նշում են, որ նշյալ պայմանագրով սուլթանը օգտվում էր Պիրամոսի (Ջահան) ողջ ձախ ափից, այդ թվում նաև Այաս հոյակապ քաղաքից՝ հայերին մնալով միայն նավահանգիստը: Քննարկվող խնդրին անդրադարձել են նաև Ս. Բոռնազյանը²⁴, Լ. Տեր-Պետրոսյանը²⁵ և Գ. Միքայելյանը²⁶, որոնք բացի Այասի կորստից, ավելացնում են նաև այն դրույթը, ըստ որի հայոց արքան Ավետարանով

²⁰ Հեթում Ախտուց, էջ 193 :

²¹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 392:

²² Կ. Մուքաֆյան, նշվ. աշխ., էջ 465:

²³ Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 92:

²⁴ Հայ ժողովրդի պատմություն, էջ 775:

²⁵ Լ. Տեր-Պետրոսյան, հ. բ, էջ 407:

²⁶ Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 465:

երդվեց խզել իր բոլոր կապերը Չռոմի պապի և Ֆրանսիայի թագավորի հետ: Կարծում ենք, որ այդ փաստը նույնպես կարող էր լինել պայմանագրի բովանդակության մեջ, որովհետև Եգիպտոսի սուլթանությունը նախկինում մի քանի անգամ արդեն զգուշացրել էր հայկական թագավորության ղեկավարությանը, որ իրենց համար ցանկալի չեն, որպեսզի հայերը բանակցեն Արևմուտքի հետ, քանի որ դա չէր բխում իրենց պետության շահերից: Ուսումնասիրվող խնդրին անդրադարձել է նաև Մ. Օրմանյանը, որը բացի հիշատակված դրույթներից ավելացնում է, որ հայերը չպետք է զաղտնի գրագրություններ կատարեին և պահանջեին նոր խաչակրաց արշավանքներ, ինչպես նաև խզեին իրենց կապերը լատինների հետ²⁷: Համաձայն ենք հետազոտողի այս տեսակետի հետ ևս, քանի որ այն լիովին բխում էր Եգիպտոսի սուլթանության շահերից: Ինչ վերաբերվում է Կիլիկյան Հայաստանի մյուս հետազոտողներին, ապա վերջիններս, հավանաբար գիտակցելով խնդրի բարդությունը և աղբյուրների սակավությունը, չեն անդրադարձել հետազոտվող խնդրի լուսաբանմանը:

Այսպիսով, ուսումնասիրելով միջնադարյան սակավաթիվ աղբյուրների ընձեռած տեղեկությունները, ինչպես նաև ժամանակակից գիտական գրականությունը՝ գալիս ենք այն եզրակացության, որ 1337 թ. Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված հաշտության պայմանագրի բովանդակային դրույթները հիմնականում հետևյալն էին.

1. Երկու պետությունների միջև դադարում էին ռազմական գործողությունները:
2. Կիլիկիայի հայկական թագավորությունը Եգիպտոսի սուլթանությանն էր հանձնելու Այաս քաղաքը, ինչպես նաև Ջահան գետից արևելք ընկած բերդերն ու քաղաքները՝ Սսիսը, Համուդան, Կովեյրան, Հարունիան, Սարվանդիքարը, Փայասը, Նաջիման, Նողեյրը:
3. Հայկական թագավորությունը Կարամանյան պետությանն էր հանձնելու Դեղնքարը և մի շարք այլ բերդեր:
4. Կիլիկիայի հայոց արքան պարտավորվում էր այլևս պատվիրակություն չուղարկել Եվրոպա՝ օգնություն խնդրելու:
5. Լևոն Ե արքան պարտավորվում էր դադարեցնել բանակցությունները արևմտաեվրոպական երկրների միապետերի և Չռոմի պապի հետ՝ խաչակրաց նոր արշավանքներ կազմակերպելու հարցում:
6. Կիլիկյան Հայաստանի ղեկավարությունը հանձն էր առնում խզելու իրենց կապերը լատինների հետ:

²⁷ Մ. Օրմանյան, նշվ. աշխ., սյուն 2166-2167:

7. Եզիպտոսի սուլթանությունը պարտավորվեց, որպեսզի դաշնակիցները հանեն իրենց զորքերը Կիլիկյան Չայաստանի տարածքից և խոստացավ պայմանագրի բովանդակային կետերի կատարման պարագայում այլևս չպատերազմել հայերի դեմ:

8. Երկու պետությունների միջև հաստատվում էր խաղաղություն և բարեկամություն:

Ահա, հիմնականում սրանք են Կիլիկյան Չայաստանի և Եզիպտոսի սուլթանության միջև 1337 թ. կնքված հաշտության պայմանագրի բովանդակային դրույթները: Ինչպես նկատում ենք, այս պայմանագիրը բավականին թանկ նստեց հայկական թագավորության վրա, քանի որ հայերը զրկվեցին շատ կարևոր նշանակություն ունեցող տարածքներից, որոնց կորուստը լուրջ խնդիրներ էր առաջացնելու նաև երկրի տնտեսական կյանքում: ԵՎ այս հաշտության պայմանագիրը տարբերվում էր նախորդ պայմանագրերից նրանով, որ այս անգամ Եզիպտոսի սուլթանությանը և Կարանանյան պետությանը անցան բազմաթիվ քաղաքներ և բերդեր, որոնք ունեին թե՛ ռազմավարական և թե՛ տնտեսական կարևոր նշանակություն:

Այս առումով շատ դիպուկ է նկատել արաբ պատմիչ Իբն-Վարդին՝ նշելով, որ Կիլիկիայի հայկական թագավորությունն անհոգի մի դիակ էր դառնում՝ կորցնելով այդ երկրները²⁸:

Պատմաբանասիրական հանդես

²⁸ Արաբական աղբյուրները, էջ 287: